«ԱՐԽԻԹՈՒԼՍ» ՍՊԸ

ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ և
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ն.Շենգավիթ թաղամասի ոռոգման նպատակով խորքային հորի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և տրամադրման խորհրդատվական աշխատանքներ

Պայմանագիր թիվ՝ ԵՔ-ՀԲՄԽԱՇՁԲ-23/8

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

## ԳԻՐՔ 1

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«ԱՐԽԻԹՈՒԼՍ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ՝ Գ. ԱՅՎԱԶՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2023 թ.

## ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ

ԳԻՐՔ 1. ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

ԳԻՐՔ 2. ԳԾԱԳՐԵՐ

ԳԻՐՔ 3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

ԳԻՐՔ 4. ՆԱԽԱՀԱՇԻՎ

# Ցանկը

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ........2
1.1 Նպատակները և աշխատանքների համառոտ նկարագիրը........2
1.1.1 Նպատակ........2
1.1.2 Աշխատանքների համառոտ նկարագիրը........2
1.2 Շինհրապարակի գտնվելու վայրը........2
1.3 Ընդհանուր տեղեկություններ կառուցվածքների մասին........3
1.3.1 Կառուցվածքներ........3
1.4 Գոյություն ունեցող իրավիճակ........4
1.5 Էլեկտրամատակարարում........4
1.6 Շինարարության տևողությունը........5
1.7 Ժամանակավոր շինարարական տնտեսություն........5
1.8 Հիմնական մեքենաները և մեխանիզմները........6
1.9 Շրջակա միջավայրի պահպանության նախազգուշական միջոցներ........6

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

## 1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### 1.1 Նպատակները և աշխատանքների համառոտ նկարագիրը

Սույն նախագիծը՝ « Շենգավիթ վարչական շրջանի տարածքում ոռոգման նպատակով խորքային հորի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և տրամադրման խորհրդատվական աշխատանքներ », իրականացվել է ըստ ԵՔ-ՀԲՄԽԱՇՁԲ-23/8 պայմանագրի, որը կնքվել է Երևանի քաղաքապետարանի և «Արխիթուլս» ՍՊԸ միջև:

#### 1.1.1 Նպատակ

Նախագծի նպատակն է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Շենգավիթ թաղամասում ոռոգման համար նախագծել և հորատել մեկ հորատանցք: Հորատանցքը նախագծվում է հետևյալ կոորդինատներում՝

X=40°08'42.7" Y=44°28'54,5" , H=917 մ

#### 1.1.2 Աշխատանքների համառոտ նկարագիրը

Սույն պայմանագրի համաձայն Կապալառուն պետք է իրականացնի հետևյալ աշխատանքները.

- փափուկ բնահողի քանդում
- հետադարձ լիցք
- փափուկ հողից, ավազային, խճային և խարամից նախապատրաստական շերտերի իրականացում
- մոնոլիտ բետոնի տեղադրում
- պողպատյա խողովակների մոնտաժ
- խողովակաամրանի մոնտաժ
- մետաղական կոնստրուկցիաների մոնտաժ
- մեկուսիչ աշխատանքներ
- հորատման աշխատանքներ
- սարքավորումների մոնտաժ
- էլեկտրոտեխնիկական աշխատանքներ:

### 1.2 Շինհրապարակի գտնվելու վայրը

Շինհրապարակը գտնվում է՝

- Երևան քաղաքում

Շինարարական հրապարակը հիմնականում ազատ է հորատման և շինարարական աշխատանքների իրականացման համար: Համաձայն ՇՆևԿ III-4-80* «Անվտանգության տեխնիկան շինարարությունում » գլուխ 2 աղյուսակ 2 –ի պահանջների՝ վտանգավոր գոտու սահմանները հետևյալն են՝ 10կՎ էլեկտրագծի մոտակա լարի ուղղահայաց մակերեսից, որը ստացվում է մոտակա լարի պրոեկցիային հողի վրա – 2մ:

**Էքսկավատորի, հորատող հաստոցի և ավտոկռունկի սլաքի թռիչքը, ինչպես նաև բանվորները չպետք է հատեն վերոնշյալ վտանգավոր գոտու 10կՎ էլգծի մոտակա լարից 2.0մ սահմանները:**

**Շինմոնտաժային աշխատանքները պետք է իրականացվեն միայն չոր եղանակին: Անձրևոտ և խոնավ եղանակին շինմոնտաժային աշխատանքների իրականացումը խստիվ արգելվում է:**

**Բոլոր շինմոնտաժային աշխատանքները պետք է իրականացվեն միայն անվտանգության տեխնիկայի ճարտարագետի ներկայությամբ:**

Շինարարական մեքենաների և մեխանիզմների մոտեցումը շինհրապարակ կատարվում է գոյություն ունեցող համայնքային և դաշտային ճանապարհներով:

## *1.3 Ընդհանուր տեղեկություններ կառուցվածքների մասին*

### 1.3.1 Կառուցվածքներ

Նախագծում ընդգրկված են հետևյալ կառուցվածքներ և աշխատանքներ՝

- Հորատանցքի հորատում 140 մ խորությամբ, իր հիդրոտեխնիկական և էլեկտրատեխնիկական մասերով
- Ցանկապատ - 7.5x7,5

Ուսումնասիրվող տարածքի տարեկան միջին օդի ջերմաստիճանը 11.7 0C է, մթնոլորտային տեղումների քանակը 302 մմ:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են Նեոգենի կավավազային շերտախմբերը, Չորրորդականի հրաբխային ապարները, որոնք ներկայացված են բազալտներով՝ ճեղքավորված, ծակոտկեն, լճա-գետային և էլյուվիալ-դելյուվիալ առաջացումներով: Հիդրոերկրաբանական տեսակետից՝ կախված ռելիեֆից և երկրաբանական կտրվածքից,տարածքը համարվում է լավ ինֆիլտրացիոն գոտի:Մթնոլորտային տեղումների մեծ մասը ներծծվելով հրաբխային ապարների մեջ սնում են նրանցից խորը գտնվող գետա-գլաքարային շերտերի մեջ գտնվող ջրատար հորիզոնը,իսկ մի մասը բեռնաթափվում է Հրազդան գետի կիրճում:Ֆիզիկա-երկրաբանական երևույթներ չեն նկատվել: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է սեյսմիկ III գոտում,սեյսմիկականությունը IX բալ:

Նախագծվող հորատանցքի երկրաբանական կտրվածքը տրվում է ըստ «Հիդրոօդերևույթաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ- ի մասնագետների տրված տվյալների: Համաձայն որի, նախատեսվում է հորատել 140.0մ խորությամբ հորատանցք:

Հորատման, ջրաերկրաբանական, հիդրոտեխնիկական և էլեկտրասնուցման բոլոր պայմանները և աշխատանքների ծավալները մանրամասն և հանգամանորեն տրված են համապատասխան գծագրերում:

### *1.4 Գոյություն ունեցող իրավիճակ*

Նախատեսվում է հորատել նոր հորատանցք, որի ջրերը օգտագործվելու են Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Շենգավիթ թաղամասում հարակից այգու ոռոգման համար։

### *1.5 Էլեկտրամատակարարում*

Սույն մասով ներկայացվում է խորքային հորի էլեկտրամատակարարման նախագիծը :

0.4կՎ գծի նախագծումը և կառուցումը կատարվելու է «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից, նախահաշվում նախատեսված գումարի հաշվին: Համաձայն ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հրապարակած N60Ն 1մարտի 2023 թվականի որոշում 0.4ԿՎ լարման ցանցին միացող սպառողների ստանդարտ միացման վճարը կազմում է

1 593 000 դրամ:

Խորքային հորերի արտաքին էլեկտրամատակարարման նախագիծը մշակված է համաձայն նախագծման առաջադրանքի և գլխավոր հատակագծի:

Ըստ էլեկտրամատակարարման հուսալիության տվյալ օբյեկտի հոսանքընդունիչները պատկանում են III կատեգորիայի սպառիչներին:

Խորքային հորի մեջ տեղակայված պոմպի էլեկտրամատակարարումը իրականացվում է նախագծվող ղեկավարման վահանակից, տեղակայված ցանկապատի մեջ: 0.4ԿՎ գծի նախագծումը և կառուցումը կատարվելու է 'ՀԷՑ' ՓԲԸ-ի կողմից, նախահաշվում նախատեսված գումարի հաշվին:

Նախատեսվող ղեկավարման կայանից իրականացվում է խորքային պոմպի էլեկտրամատակարարումը:

Խորքային պոմպի էլեկտրասնուցման մալուխը անցկացվում է խրամուղու մեջ, գետնի մակերեսից 0.7մ խորությամբ, կառույցների հիմքերից ոչ պակաս 0.6մ հեռավորությամբ ПУЭ գլուխ 2.3.84:

Մալուխների փռումը գրունտի մեջ իրականացնել համաձայն ПУЭ գլուխ 2.3.83 և 2.3.99:

Զուգահեռ տեղադրման ժամանակ հեռավորությունը (հորիզոնական) մալուխային գծերից մինչև խողովակաշարերը պետք է լինի ոչ պակաս 1մ, ПУЭ գլուխ 2.3.88, 2.3.89:

Մալուխային և ջրամատակարարման գծերի հատման ժամանակ, մալուխային գիծը անցկացվում է պահպանելով 0.25մ հեռավորությունը մալուխային և այդ գծերի միջև , ПУЭ գլուխ 2.3.95, 2.3.96:

Մալուխների փռումը կանաչ գոտում իրականացնել համաձայն ПУЭ գլուխ 2.3.87:

Սպասարկող անձնակազմի անվտանգության համար ցանցի հողակցումը կատարել համապատասխան ПУЭ հրատարակություն 7:

## 1.6 Շինարարության տևողությունը

Շինարարության նորմատիվ ժամկետը որոշվել է ըստ ՇՆևկ 1.04.0.3-85 և կազմել է՝ 30օր:

## 1.7 Ժամանակավոր շինարարական տնտեսություն

Առաջարկվում է կազմակերպել մեկ շինարարական տնտեսություն համապատասխան օժանդակ կառույցներով, որոնք տեղակայվում են ոչ օգտագործվող հողատարացքների վրա:

*Ժամանակավոր շինարարական տնտեսության շենքերի և շինությունների ցուցակ*

| h/h | Անվանում | Քանակ | Չափեր, մ | Ծախ-սվող էներգ. կՎտ | Ծանոթա-գրություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Աշխեկի գրասենյակ | + | 8.6 x 3.1 | 6 | կոնտեյներային |
| 2 | Հանրակացարան 6 բանվորի համար | + | 10.7 x 2.4 | 8.7 | շարժական |
| 3 | Գործիքների պահեստ | + | 6.7 x 3.0 | 6 | կոնտեյներային |
| 4 | Մեխանիկական արհեստանոց | + | 7.25 x 2.9 | 7.2 | կոնտեյներային |
| 5 | Հանդերձարան չորանոցով | + | 6.7 x 3.0 | 7.22 | շարժական |
| 6 | Ջեռուցվող տնակ | + | 3.9 x 2.4 | ըստ պահանջի | շարժական |
| 7 | Վագոն - ցնցուղարան | + | 10.4 x 3.1 | 8.4 | կոնտեյներային |
| 8 | Մեկ տեղանոց զուգարան | + | D 1.3 | 1 | - |
| 9 | Վագոն - ճաշարան 12 բանվորի համար | + | 10.3 x 3.1 | 2.8 | կոնտեյներային |
| 10 | Բուժ. կետ | + | 10.0 x 2.4 | 7.7 | կոնտեյներային |
| 11 | Կիսածածկ պահեստ | + | 10.0 x 5.0 | | - |
| 12 | ՇԷԿ - 30 | + | 2.3 x0.89 | | АД-30С-РМ1 |
| 13 | ՇԷԿ - 60 | + | 2.7 x1.95 | | АД-50С-Р |

Պահանջվող մակնիշի բետոնի պատրաստումը առաջարկվում է կատարել մոտակա կենտրոնացված բետոնախառնիչ հանգույցում, որը ապահովված կլինի չափաբաժին կշռող սարքավորումներով: Վերոնշյալ ժամանակավոր շինարարական տնտեսության շենքերի և շինությունների ցանկը կճշտվի շինարարության ընթացքում:

## *1.8 Հիմնական մեքենաները և մեխանիզմները*

Շինարարական մեքենաների, մեխանիզմների և սարքավորումների տեսակները և տիպերը տրված են խորհրդատվությամբ և կարող են ենթարկվել փոփոխության, ելնելով գոյություն ունեցող տեխնիկայի առկայությանը կամ ձեռքբերման հնարավորությունից, սակայն նրանք պետք է ունենան նույնատիպ տեխնիկական ցուցանիշներ:

Հիմնական մեքենաների և մեխանիզմների մոտավոր քանակություն

| Հ/Հ | Մեքենաների և մեխանիզմների անվանում | Մեքենաների մակնիշը և տիպը | Քանակ, հատ |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Ավտոինքնաթափ | բեռնատվ. 7.5տ | 2 |
| 2 | Ավտոբետոնախառնիչ | տարողությունը 2մ$^3$ | 1 |
| 3 | Ավտոամբարձիչ | 10տ | 1 |
| 4 | Բուլդոզեր | հզորությունը 59կՎտ | 1 |
| 5 | Կոմպրեսոր | արտադ-յունը 10մ$^3$/րոպե | 1 |
| 6 | Էքսկավատոր | 0.25մ$^3$ շերեփի տարողութ. | 1 |
| 7 | Խորքային վիբրատոր | ԻՎ | 1 |
| 8 | Ձեռքի պնեվմատոփիչ | - | 1 |
| 9 | Եռակցող ապարատ | պոլիէթիլենային խողովակների համար | 1 |
| 10 | Եռակցող ապարատ | պողպատե խողովակների համար | 1 |
| 11 | Հորատող մեքենա | 1БА-15В | 1 |
| 12 | Շաղախախառնիչ | - | 1 |

## *1.9 Շրջակա միջավայրի պահպանության նախազգուշական միջոցներ*

Հորատումից առաջացած թափոնները նախատեսվում է տեղափոխել 2կմ հեռավորության վրա պահպանելով շրջակա միջավայրի ապահովության նախազգուշական միջոցներ:

Բոլոր անհրաժեշտ միջոցները կապված արտաքին միջավայրի պահպանության հետ, պետք է իրականացվեն Կապալառուի կողմից, համապատասխան կոմպետենտ մարմինների կարգադրությունների և ճարտարագետի հրահանգների: Այդ միջոցները հետևյալում են (բայց չեն սահմանափակվում նրանցով)՝

- ժամանակավոր օգտագործված հասարակական և մասնավոր հողերի վերականգնում

- նախազգուշական միջոցներ կապված ոռոգման, դրենաժային կառուցվածքների և ջրային ճանապարհների աղտոտման կանխման հետ
- ծառերի և բույսերի պահպանություն
- չօգտագործված նյութերի ճիշտ տեղադրում
- բոլոր օգտագործվող նյութերի ճիշտ տեղադրում
- բոլոր շինհրապարակների անհրաժեշտ մաքրում և կարգավորում
- սանիտարական միջոցառումներ
- վնասակար ազդեցության նվազեցում:

Աշխատանքները պետք է կատարվեն այնպես, որպեսզի կանխվի արտաքին միջավայրի քայքայումը և մաքսիմալ պահպանվի բնական լանդշաֆտը: Արտաքին միջավայրը՝ հանքերը, մշակվող տարածքները, անտառները, թփուտները պետք է պաշտպանվեն Կապալառուի ոչ բարենպաստ քայքայիչ գործողություններից, բացառությամբ մշտական աշխատանքների կատարման դեպքերը:

Շինարարական աշխատանքները կատարելուց հետո, անհրաժեշտ է կատարել վերականգնողական աշխատանքներ, բարեկարգել տարածքը, արտաքին միջավայրի հետագա քայքայման կանխման նպատակով(հողի էրոզիա և այլն):

Կապալառու պետք է կազմակերպի աշխատանքները այնպես, որպեսզի կանխի վերգետնյա և ստորգետնյա ջրային օբյեկտների աղտոտումը շինարարական աղբով, չվարակազերծված ջրերով, նավթամթերքներով, քիմիկատներով և այլն: Չվարակազերծված ջրերը չպետք է հեռացվեն գետերի մեջ, առանց մաքրման տղմազտիչներում և ուրիշ սարքերում :

Կապալառուն պարտավոր է ապահովել թափոնների և շինարարական աղբի համապատասխան տեղադրում: Թափոնների թաղումը չպետք է նպաստի ստորգետնյա ջրերի աղտոտմանը:

Կապալառուն պարտավոր է նախատեսել միջոցառումներ, կապված շինարարական փոշուց օդի աղտոտման նվազեցման հետ:Նյութերը, արմատահանված թփուտները և ծառերը պետք է այրվեն բարենպաստ բնական պայմաններում, սեփականատիրոջ համաձայնությամբ:

Կապալառուի օժանդակ կառուցվածքները՝ պահեստները, բնակելի շենքերը, պահեստային հրապարակները պետք է տեղակայված լինեն, հնարավորին չափով, շինհրապարակի սահմաններում:

<u>**Հողային, բետոնային, խողովակների աշխատանքների փոքր ծավալներից ելնելով տեխնիկական մասնագրերում ներկայացված չէ տվյալ աշխատանքների մասերը: Տեղադրվող բետոնը, մոնտաժվող խողովակները պետք է համապատասխանեն նախագծում բերված և գործող նորմատիվների պահանջներին:**</u>